

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՆՍՄԱԿԱՆԻՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, ք. 11-12, էջ 293)

Երբ արդեն հրատարակութեան յանձնած էինք Ոսկան վարդապետի նամակներն, անոր հրատարակած Աստուածաշունչի երեքհարկերամեակին նուիրուած «Բազմավեպ»-ի թիւին մէջ (1966, թ. 11-12, էջ 293-308), պատահամբ հանդիպեցանք Վատիկանի հայ ձեռագիրներու ցուցակին մէջ¹, Ոսկան վրդ.ի ուղղուած քանի մը նամակներու եւս: Ձեռագիրը, ուր անոնք պահուած են, անվարժ գրչի մը օրինակութեամբ եղած է, եւ հաւաքածոյ մըն է զանազան նիւթերու, եւ տարբեր գրչիներէ ալ օրինակուած: Մեզ հետաքրքրող նամակներու շարքին՝ կային մեր հրատարակած Ոսկան վրդ.ի թիւ 1 եւ 2 նամակները², ինչպէս նաեւ նամակագրութեան նմոյշ ծառայելիք զանազան պատճեններ:

Ա) Ասոնց շարքին մեր ուշադրութիւնը գրաւեցին Ոսկանի ուղղուած երեք նամակներ, որոնք ամէնքն ալ գինք կը հրաւիրեն վերագառնալու հայրենիք: Ինչպէս նշած էինք մեր հրատարակած նամակներու ծանօթութեան մէջ³, Ոսկան 1637ին՝ էջմիածնէն հալածական՝ անցած էր Պոլիս, անկից ալ՝ Ս. Աթոռէն եկած հրահանգով՝ դացած էր Լեհաստան: Վերոյիշեալ երեք նամակները, գրուած էջմիածնէն, ուղղուած են Ոսկանի, որ Լեհաստան կը գտնուէր: Գրողներէն առաջինն է Սիմէոն Վրդ. Զուղայեցի, աշակերտ խաչատուր վրդ.ի եւ ուսուցիչ էջմիածնի մէջ, հեղինակ Քերականութեան եւ Տրամաբանութեան: Սիմէոն, իր նամակին մէջ, կը խօսի իր ստացած նոր զարգացումին մասին՝ բնախօսութեան եւ աստուածա-

բանութեան մէջ: Կը քննադատէ Ոսկանի գրիւած մէկ քերականութիւնը, եւ իր քերականական գիտութեան նմոյշները կու տայ. հուսկ կը հրաւիրէ զինք վերագառնալու հայրենիք՝ նամակը վերջացնելով այս սրտառուէ խօսքերով. «Արդ, աղաչեմ, եթէ դմեղ մոռացար, վասն մօր քո ե'կ, ե'կ, ե'կ. ոչ է բաւ»: Նամակը գրուած է 1639ի մարտ 25ին: Կը գտնուի Վատիկանի մատենադարանը (Վատիկանեան Հաւաքածոյ, թիւ 16, թղ. 229p-230p): Ձեռագրի կազմուած ատեն՝ թուղթերէն ոմանք եղերքէն կտրուած ըլլալով, ինչ ինչ բաւեր կ'իստատ մնացած են. մենք կրցածնիս լրացուցինք, փակադժի մէջ առնելով լրացուած մասերը:

Բ) Երկրորդ նամակը (թ. 11) գրած է Զաքարիա վարդապետ, որ կ'երեւի թէ Ոսկանի հանդէպ հոգեւոր հօր մը գերը ունեցած է: Զաքարիա վրդ. կը ծանրանայ Ոսկանի մօր եւ եղբայրներու խնդրանքին եւ կարօտի բռնն զգացումներուն վրայ: Կը խոստանայ երաշխաւոր ըլլալ Հոգեւոր Տիրոջ, այսինքն՝ Փրկիչպոս կաթողիկոսի առջեւ, ստանալու իրեն համար քահանայական եւ վարդապետական իշխանութիւնները: Ասկէ կ'երեւի թէ այս թուականին՝ Ոսկան տակաւին ձեռնադրուած չէր, ինչպէս իր ընկերներէն մէկն ալ՝ Հայրապետ, որ օծման առթիւ պիտի կոչուի Տէր Կարապետ, ըստ յաջորդ նամակին տուեալներուն: Զաքարիա

1. TISSERANT, Codices Armeni Bibl. Vaticanae, Romae, 1927:

2. Բազմավեպ, 1966, թիւ 11-12, էջ 293-4:

3. Բազմավեպ, անդ, էջ 304, թ. 2:

վարդապետ ալ իր նամակը կը փակէ թախանձաղին հրաւիրելով զինքը. «Դարձի՛ր, դարձի՛ր եւ ե'կ այսր»: Նամակը գրած է 1639ի Ապրիլ 29ին: Կը պահուի Վատիկանեան Մատ.ի նոյն Ձեռագրին մէջ (թիւ 16, թղ. 230p-231p):

Գ) Երրորդ նամակը (թիւ 12) գրուած է Ոսկանի երեք դասընկերներէն, որոնք են Տէր Յովհաննէս, Հայրապետ (որ օծման առթիւ կոչուած է Տէր Կարապետ) եւ Մկրտիչ, որ նամակը գրողն է: Նամակին մէջ կը նկարագրեն Սիմէոն վարդապետի դասախօսութիւնները, եւ անոր դասերուն յաճախող աշակերտներու թիւը կը արժուի (երեսուն հոգի): Եւ հիացումով մը կ'աւելցնեն թէ. «Եթէ դու աստ կու լինէիր՝ քան զամենեւին գերագոյն կու լինէիր»: Կը մարդթեն եւ կը յուսան թէ հիմա Ոսկան ալ աւելի զարգացած ըլլայ, եւ Դաւիթ Անյաղթի նման վերագառնայ հայրենիք: Նամակին կը վերջացնեն հետեւեալ աղաչանքով. «Վասն Աստուծոյ կու աղաչեմք, սիրելի եղբայր մեր Տէր Ոսկան, ահա այսչափ ժամանակս բաւական իմն է. դա՛րձ առ քո Հոգեւոր հայր եւ եղբայրս մեր, իրրեւ անառակ որդւոյ դարձն»: Նամակը գրուած է նախորդներուն հետ անշուշտ, բայց թուականը կը պակսի: Կը պահուի նոյն տեղը (թղ. 228p-229p):

Դ) Այս բոլոր նամակները, թէեւ գրուած են 1639ին, բայց Ոսկանի ձեռքը աւելի ուշ հասած ըլլալու են: Նամակները տանողն ալ պէտք է որ անոր եղբայրը՝ Աւետիսն ըլլայ, ինչպէս կը տեսնուի Սիմէոնի գրած նամակին սկիզբը. «Նուաստ Սիմէոն առաքեմ ողջոյն սիրալիւ եւ համբոյր անկեղծ ծառայիդ սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն եւ եղբորդ իմոյ Տէր Ոսկանոյդ ի ձեռ[ի]ն եղբոր քում Աւետեացդ»: Աւետիսի մինչեւ Լեհաստան գալը կրնայ ըլլալ որ տարի մը տեւած ըլլայ, եւ Ոսկան 1640ին ստացած է նամակները եւ համբայ ելած է⁴, ինչպէս յաջորդ գրութենէն կրնանք կռահել (թ. 13), որ Ոսկանի կողմէ եղած խնդրագիր մըն է՝ ուղղուած Լեհաստանի, կամ լաւ եւ Լեհ-

պոլսոյ քաղաքին 12 հայ իշխանաւորներուն: Հոն, Ոսկան կ'իմացնէ իր որոշումը հայրենիք վերագառնալու եւ կը խնդրէ որ իրեն վկայական մը տան եւ օգնական ըլլան իր վերագարձին: Այս ալ կը պահուի Վատիկանեան մատենադարանի նոյն ձեռագրին մէջ (թիւ 16, թղ. 231m):

Ե) Ասոր քով կայ վկայական գիր մը (թ. 14), տրուած Լէոպոլսոյ 12 իշխանաւորներէ, որ թէեւ Ոսկանի անունին չէ գրուած, բայց կրնայ իբր նմոյշ զաղափար մը տալ թէ ինչ տեսակ վկայականներ կը տրուէին: Վկայականին մէջ այս անուն կ'ըսուի եւ արեղայի մը համար գրուած է. եթէ Ոսկանի համար էր վկայականը, պէտք է եղբակացնենք թէ ան արդէն արեղայ էր եւ կը պատարագէր, ինչ որ մեր վերեւ գրածին կը հակասէ: Ուստի, պէտք է համարել որ վկայականը պարզ իբր նմոյշ գրուած է եւ Ոսկանի համար չէ: Ան ալ կը պահուի նոյն ձեռագրին մէջ (թղ. 228p):

10.

Հետեւող Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն եւ աշակերտ Եւամեծին խաչատուրոյ՝ նուաստ Սիմէոն առաքեմ ողջոյն սիրալիւ եւ համբոյր անկեղծ ծառայիդ սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն եւ եղբորդ իմոյ Տէր Ոսկանոյդ ի ձեռ[ի]ն եղբոր քում Աւետեացդ:

Եւ ըստ այսց հարցանեմ զկենցաղավարութիւնդ ողորմելի, զի ի մէջ այլադա-

4. Ոսկան Լեհաստան մնացած է երկու կամ երեք տարի, եւ 1641ին վերագարձած է Հայաստան, ինչպէս կը վկայեն Փրիմավալի եւ ուրիշ մէկ ընկեր մը, որոնք իրեն հետ եղած են այդ շրջանին: Փրիմավալի կը գրէ իր մէկ տեղեկագրութեան մէջ. «Ոսկան երկու տարի մնաց Ռուսիոյ Լէոպոլիս քաղաքը. եւ 1641ին վերագարձաւ Հայաստան»: Ուրիշ մէկ ընկերը կը գրէ. «Երկու տարի մնացինք Պոլիս, ապա Ս. Ժողովի հրամանով Լեհաստան անցանք. հոն երեք տարի ապրեցանք ողորմութեամբ»: Բայց այս տեղեկագիրն ալ համաձայն է ըսելու՝ թէ Ոսկան 1641ին Հայաստան վերագարձած ըլլայ (ՏԵՍ ԹԵՐԳԵԱՆ, Յակոբ Զուղայեցի, Պէյրութ, 1956, էջ 39-40):

ւան եւ անողորմ եւ հեշտասէր ազգի բընակեալ ես: Եւ եթէ զմեզ հարցանիցես, եմք ողորմութեամբ Տեառն ընդ հրամանաւ հոգեւոր հարց մերոց: Բայց վասն քո եւ վասն Տէր Կիրակոսին յոյժ տրամուծիւն ունէաք մեք եւ ծնողք ձեր: Այլ վասն Տէր Կիրակոսին սակաւ մխիթարեցաք. իսկ վասն քո՝ ոչ, այլ օր ըստ աւուրց յաւելու, եւ մանաւանդ ծնողք (230ա) քո եւ եղբարցն քո եւ ընտանեաց եւ բարեկամաց:

Արդ զիտեմ ստուգապէս զի զղջացեալ ես եւ ապաշաւես. քանզի ես ինքնին դմին հանդիպեցայ: Քանզի յորժամ ոչ զիտէի զգորութիւնս զրոյց եւ ոչ է[ի] տեսեալ զդոստ, եռայր սիրտ իմ առ խաբերայալ, և դու զիտակ իսկ ես: Իսկ յորժամ զճշմարտութիւն հաւատոյ ուսայ] և զգոքա տեսի, զիտես թէ ո՛րպէս վարէի ընդ երկաւ ընակալ: Եւ այն յայնմ ժամանակին, որ ոչ զիտէի ճշմարտապէս զընախօսութիւն, նաեւ զգորութիւն բանից աստուածաբանութեան, այլ սակաւուք հասեալ էի ճշմարտութեան: Իսկ այժմ՝ եթէ տեսանիցես զիտեալիս թէ որչափ չնոր[հօք] սուրբ Հոգւոյն յաւելեալ եմ, նաեւ զհակառակութիւն ընդ նմին, զիտեմ ճշմարտապէս, զիտեմ զի թէ տեսանիցես՝ հաւատայցես. իսկ անտեսութեամբ անհնար է քեզ հաւատալ: Մի՛ տեսր՝ պարծի. ողորմութեամբ [Տեառն] ոչ ախտանամ աշուտ, այլ վասն քո ասեմ՝ զի դ[ատ]նայցես աշուտն աշուտ: Նաեւ ոչ եմ ստեալ որպէս [զի] դայցես, այլ ճշմարտ էր ասացեալս: Ուա՛խ, ուա՛խ, զի՞նչ արարից, ոչ զիտեմ. քանզի ոչ միայն վասն դալ[ոյդ], այլ եւ վասն ոչ զիտելոյդ աւագեմ. զի այն զիրն, որ առաքեալ էիր՝ թէ զքերականութիւն լաւ զիտի, զոյր [յոյժ] անարուեստ, ոչ ըստ այնմ արուեստին որ նախ (...) ի միջի մերում էր, այլ ա՛յլ իմն որ ոչ լուեալ ես, եւ թէ լուեցես, բայց ոչ զիտես. քանզի ի զրեցելումն քո ոչ [զոյր] ընտրութիւն հոլովմանց բայի: Եւ արդ զայս հարցից (230բ) սիրեցես, սիրեցիր, սիրիցես, եւ զանազանքն.

քանզի տրամատրութեամբ, տեսակաւ, ձեւով, թուով, զիմօք եւ ամանակաւ անզանազանք եւն եւ հոլովիւք միայն զանազանեալք: Եւ այս վասն այնր զրեցի՝ զի խիստ զովեալ ես զքերականութիւն որ յայդմ վայրի է: Այլ ի միջի մերում զի՞նչ է քերականութիւն, այլ հարցընդ զընախօսութիւնն եւ զաստուածաբանութիւնն: Եւ արդ ճշմարտապէս ասացից զքո տեսեալն իրրեւ զանուանէ համարեալ առաջի աշխատ. եւ զայս վասն իմ եւ վասն եղբարց իմոց ասեմ, զոր յառաջն տեսեալ ես, իրրեւ թէ ընդ աշխատ համեմատելով անուանեալք: Ուա՛խ, ուա՛խ, զո՞րս զրեցից. զի զժուարադոյն է զամենայն ի թիվի պարունակել: Արդ աղաչեմ, եթէ զմեզ մոռացար, վասն մօր քո ե՛կ, ե՛կ, ե՛կ. ոչ է բաւ:

Գրեցաւ ձեռամբ իմով տաղնապաւ,
ի մարտի ի քսան հնդին
ի թուականիս մերում ի ՌԶԼին (1639)

(Մատ. վատ. վ. 16, քդ. 229բ-230բ)

11.

Տեառն Յիսուսի Քրիստոսի նուստ ծառայ Զաքարիա վարդապետէ, յորմէ ժամանեցէ զիր սիրոյ եւ տենչանաց, ազերսանաց եւ հառաչանաց առ սիրասընունդ եւ հոգիածին միտք իմանալեալ բուծեալ հարազատ որդեակդ իմ՝ Տէր Ոսկանդ:

Ըստ այսմ յարեալ եւ խուզումն զկենացդ եւ որոնումն զկայիցդ եթէ ո՛րպէս եւ (231ա) զի՞արդ եւ ուրանօր իցես եւ կացես միայն եւեթ: Որում ըստ առաւելայ բանին կայցի զհակակայ յառնելոյն միայն, ըստ ամենայնի պատահման: Զոր եւ կամեցօղն ամենեցունց զիւտի, Աստուածն խնամակալ, ամենակարող տացէ ըստըն[ումն] մտացդ՝ զառնալ միւսանգամ առ սեպհ[ակ]անն կայ եւ առ նախնականն անունդ. ընտրել քեզ զընտրելին, յորմէ ելումն բա[րի] յոյժ, եւ վախճանն ըստ սկսմանն. ամէն:

Եւ ընդ ողջունիս յուշ լիցի սիր[եց]եալ

որդ[եկի] իմոյ Տէր Ոսկանդ, զի զըժուարին իմն է] կամաց մերում առ իր ինչ, որպէս յայտ է ամենե[ցուն]. եւ է պատճառ այսմ՝ անձնիչխանութիւնն, որ ի [մեզ]: Վասն որոյ եւ անհնարին համարիմ զձնել (զարձուցանել) զսիր[եկիդ] առ մեզ. զի թէպէտ եւ մեծ ոմն լինիցիմ եւ [կամ] յաւելաւոր բանիւ. քանզի պիտոյ՝ ընդ [կար]ողութիւն կրողին եւ սպա ներդործութիւն կամողին: Սակայն վստահացեալ ի մերձաւորութիւն սիրոյ քոյ առ մեզ եւ ի բնական շարժումն (...) զթոյ, որ բնութեան է դործ, զի արտաձգու[թիւն] բնութեան կարէ ընդդիմակցիլ ախոր[ժ]ակին, թէպէտ եւ ոչ միշտ. ըստ այսմ զրեցի զայս թուղթ աղաչանաց առ քեզ, զի թերեւս ստիպիցիս զթալի ազեալ զառնալ աշխուտ աշար, ի բնիկ քո երկիր եւ ի նախնի քո սիրելիս: Տի՛նա խնայեցես յարտասուս մօր քո, զոր մօրմօրի մեծաւ թախանձամբ ի տուէ եւ ի զիչերի, եւ ի կարօտութիւն եղբարց քոց եւ ընտանեաց: Քանզի պատճառք զարձի յորունք եւ, որ ստիպեն զքեզ. եթէ միոյն ո՛չ անսայցես, զոնեա միւսումն անսա՛: Կամ լո՛ւր ձայնի իմում, որ սիրեմք զքեզ եւ հայրօրէն ինչ իւրք խնամակար լեալ եմ քեզ, կամ անխայեա՛ ծնողի քո եւ եղբարց, զոր տառապին միշտ. «զի առնիծեալ ի Տեառնէ որ ցասուցանէ զհայր եւ զմայր իւր», ըստ Սիրաքայ (Գ. 18):

Արդ, սիրելի որդի, մի՛ լիցի ա՛յլ եւ այլ կարծիք, կամ միտք արասցես կամ ամօթ համարեսցես զզառնալն. եւ եղէց երաշխաւոր քեզ՝ առաջի Հոգեւոր Տիրին, եւ զի՞նչ որ քո կամքն է (231բ) այնպէս տամ առնել, թէ՛ քահանայական եւ թէ՛ վարդապետական իշխանութիւնն. որպէս քո եղբարցն եղեալ է, քեզ եւս այնպէս առնել տամ:

Դարձի՛ր, դարձի՛ր, եւ ե՛կ աշար, զի զամենայն ցանկութիւն քո լցուցիս աստ և լիցիս որդի զօրութեան շնորհօք Տեառն. ամէն:

Գրեցաւ ի թուականութեան մերայինս
ազգի ՌԶԼ (1639) յԱպրիլ ԻԹ:

Գծող սորին զնոյն աղաչէ. դարձի՛ր, սիրելի եղբայր, շնորհօք Քրիստոսի զառաւել քան զայդ երեւեալ ի միջի մերում եւ զերազանց եւս:

(Մատ. վատ. վ. 16, քդ. 230բ-231բ)

12.

Երջանիկ եւ երանաշնորհ ցանկացող եւ բաղձալի, սիրելի սիրելւոյն եւ ցանկալի մերոյս ողջոյնական հանդերձ աստուածային սիրովն, տարփալի եւ յարայիզձ, տառանեալ եւ յանձկութիւն ի յաշխարհ հեռի, անտես եղբարց սիրելեաց եւ բարեկամաց, եւ ծնողաց եւ յազգականաց, եւ հոգիաշունչ եղբորդ մերոյ Տէր Ոսկանդ, նուստ, յեղեռնադործ եւ սատաբակ (!) յեղբօրէ քումմէ Տէր Յովհաննիսէ, Հայրապետէ, որ եւ յաւուր օծմանն [եւ] անուանեցաւ Տէր Կարապետ, և փրծուն անուն Մկրտչէ. որ եւ տէրութիւնն իսկ ընկալաք Փետրուարի ԺԴ, օր Տեառնընդառաջին (229ա) բաղում թախան[ձանօք] եւ զօրովաղութ սիրով հարցանեմք զորպ[իսութիւն] քո, թէ զիարդ կաս աշու՛ վտարանդեալ աշխ[արհին] Ֆրանկաց. մտօք հանգա՞րտ՝ թէ տառան[եալ ես]: Դարձեալ չե՛ս (!) թէ զմեզ յետեալս հարցման արժան[ի առնես]՝ կեամք առողջ մարմնով եւ տկար հոգւով առ սուրբ [լեառն] մերոյ Սիօնի. կամք սորա ծառայութեամբն ի յոտն [Փիլիպ]պոս կաթողիկոսին: Դարձեալ թէ հոգեւոր տէրի միար[ան] հարցանես այսպէս կեան. Սիմէոն վարդապետն ... եկն ի սուրբ Աթոռ հայկազեան եւ հաստատ[եաց] զ[ն]որ Աթէնս շնորհօք սուրբ Հոգւոյն, եւ ետ դաս զքերականն, զՊորփիրն, Ստորոգութիւնքն եւ զՊերիարմենաս, յԱրարածքն եւ զՊօղոսի Երրայեցուց թու[ս]թն եւ զմեծամեծքն կատարեալ ուսան եւ զկրտսերադոյնքն ըստ իւրեանցն չափովն, որ իւրեանց կարն էր: Այսչափ տեղացս մարդ էին աստ. խաչատուր վարդ. ի տղայքն, Եսայի վարդ. ի տրդայքն, Զաքարիա վարդ. ի տղայքն, եւ էին ամենեքեան մե[ծ] եւ փոքր Լ. հոգի:

Դարձեալ թէ դու աստ կու լինէիր քան զամենեւեան զերազոյն կու լինէիր: Ահա զսոքա ոչ համարեր եւ զքո ազգն եւս, զնացիր ալ ազգաց. ոչ թէ սոքա զխոռոչն են քան զնոքա. սոցանէ ուսանիմ թէ Քրիստոսի եւ թէ Աստուծոյ: Աստուած զքո սիրտի իղձն եւ զքո փափաքն [որ] բազում ժամանակաց փափաքէր՝ առեր: Տեսանեմք թէ որպէս ճոխ քաջութեամբ կու ելանես ալի, ծաղկեալ լի իմաստութեամբ, նման անյաղթ փիլիսոփայիցն, որ է Դաւիթ եւ ... (229բ): Ո՛հ, ո՛հ, թէ զքո ծնողաց համբաւն որպիսի կու լսեմք ազիրողորմ վասն հեռացելոյդ: Ահա զքո եղբայրն եկն աստ եւ պատմեաց մեզ զծրնօղէ քուսմէ: Վասն Աստուծոյ կու ազալեմք, սիրելի եղբայր մեր Տէր Ոսկան, ահա այսչափ ժամանակս բաւական իմն է. դա՛րձ առ քո հոգեւոր Հայր եւ եղբայրս մեր, իրեւեւ անառակ որդւոյ զարձն: Ուր իցէ մեղայ, անդ եւ իցէ թողութիւն: Ողջ լեր ի Տէր, ողջոյնեալդ ի Հոգւոյն սրբոյ. ամէն:

(Մատ. վատ. վ. 16 քդ. 228բ-229բ)

13.

Համապատիւ եւ զերաթիւ երջանկազ- [զի] եւ Քրիստոսընկալ զասուդ, որք զերկնաւ [որ] ական տպաւորութիւնն որ ի Քրիստոսէ Փրկչէ ամենեցուն՝ [փրկ]է իւրոցն սիրելեաց խոստումն ընձեռեցաւ [է] վասն յապաղա ժամանակի աստ յարա- [ուցի] ինչ զաղափարաւ ներ ձերումդ միջի տաղաւ [ար] ունիք. երկոտասան զատաւորացդ մա [ն]աւանդ [քեզ] փոխա- նիդ եւ զերազունիդ ամենեցունց՝ նուաստ [եւ] տառապակիր [ս] Ոսկանս, որ բազմափիշտ տաղնապաւ խոշտանկեցայ, յարտաքուստ եւ ի ներքուստ արհաւիրք եւ ալէկարկառ բախմամբ փորձութեանց, ըստ Պօղոսի որ առ Կորնթացիսն գրէ: Իսկ այժմ շնորհօք Տեսուն եւ նորին խնամար- կութեամբն կամիմ դառնալ առ Հայրն իմ սեփական եւ ի բնիկն իմ դաւառ, ըստ խոստման եւ ըստ խոստման մերայնոցն

վարդապետաց: Վասն որոյ խնդրեմ ի ձէնջ բազում հառաչանօք անմեղադիր լինել առ իս. եւ եթէ իրօք [եւ] ընչիւր յիմմէ կոյս կողմանէ ձերոյդ արդասալիր մեծանձնութեանդ նըքողութիւն ինչ տա- բաղաւ իմիք պատահեցաւ՝ ներեցէք եւ շնորհեցէք: Զի այսպէս լինել ոչ էր ըստ մեր նախայօժար կամակարութեան, այլ ըստ զիպուածոյ. իսկ եթէ ի վերնակա- նէն կառավարչէ եւ ի ստորանկելոյն փայ- լակնէ՝ ոչ զիտեմք. քանզի խորհուրդ մահկանացուած զանկիւտօղք են՝ ըստ Սո- զովմովնի, այլ պարտիմք ըստ Պօղոսի՝ փառս տալ եւ հիանալ, ըստ բանին որ ի Հոովմայեցուց թղթում:

Իսկ դուք վասն Աստուծոյ օղնական եւ օժանդակ լերուք ինձ եւ ուղղեցէք զնացս առ Հայր հանուրց եւ առաջնորդեցէք ինձ առ Տէրն իմ խնամիչ. զի զնացեալ անդ առ նաւահանդիստն իմ եւ հանդ [արտեալ] ի ծովածուփ ալեացս. որոց փոխարէն եւ դուք խաղաղութիւն եւ անդորրութիւն զտջիք ի Քրիստոսէ, այժմ եւ ի հանդեր- ձերումն, որ է օրհնեալ յաւիտեանս:

(Մատ. վատ. վ. 16, քդ. 231ա)

14.

Ի համապատիւ զնոյն եւ ի համապա- տար ժողովոյ երկոտասան զատաւորացս իւրով քաղաքի, աստուածադարդ եւ թաղա- ւորապերձ, իմաստնապաճոյճ եւ հրաշա- փառ դղեկի, հասցէ զիր սիրոյ եւ նամակ զգուական առ ամենայն հայկապետ ազգդ՝ վասն բարեբարոյ եւ քրիստոսակիր թա- բեղայիդ Տէր (այս անուն), որ սպասա- ւորեալ ամենայն կենօք եւ քաղաքալա- բութեամբ իւրով Աստուծոյ, մանաւանդ սրբոց տաճարաց, աղօթանուիրութեամբ եւ պատարագամատուցութեամբ. ի սկ այժմ կամ եղեւ դմա մեկուսանալ ի մէնջ եւ յեւանել ալի կողմանդ:

(Մատ. վատ. վ. 16, քդ. 228բ)

Հրատ.

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԲԱՆԱԶԵԻԸ

Ծագումը

Մկրտութեան արարողութեան ամէնէն աւելի կենսական մասը բանաձեւն է, այս- ինքն՝ այն խօսքերը, զոր մկրտողը կ'ար- տասանէ՝ երբ ջուրը կը թափէ մկրտեա- լին զլիսուն. այս խօսքերով ու ջուրով կը կատարուի բուն մկրտութեան խորհուր- դը:

Յիսուս, համարաձեւէն առաջ, յանձ- նարարեց իր աշակերտներուն. «Մկրտե- ցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգ- ւոյն սրբոյ»¹. աշակերտները մկրտեցին եւ սորվեցուցին թէ քրիստոնեայ ըլլալու համար՝ անհրաժեշտ է ամենասուրբ Եր- րորդութեան անունով մկրտութիւնը:

Դարեբու ընթացքին

Առաջին դարու ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան մէջ, անթիւ վկայութիւն- ներ կան այս ուղղութեամբ. սակայն, ա- ռանց ծանրանալու անոնց վրայ, կ'անց- նինք քննելու հայկական աղբիւրները. նախ՝ համառօտակի, զանազան պատմա- կան տուեալները, եւ ապա ուղղակի աղ- բիւրները, այսինքն՝ ձեռագիր Մաշտոց- ները:

Առաքելական կոչուած կանոնները հի- նէն ի վեր թարգմանուած են հայերէնի եւ որոշ աղղեցութիւն պէտք է ունեցած ըլլան յետագայ աղբիւրներուն վրայ: Եր- կրորդ առաքելական կանոններ՝ կոչուած զրութեան մէջ, երկու յօդուածներ, Զ եւ ԶԲ, կը շօշափեն խնդիրս: Առաջին կա- նոնը կ'ըսէ. «Եթէ ոք եպիսկոպոս կամ ե- րէց ըստ Աստուծոյ բարբառոյն ոչ մկրտ- աեսցէ ի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հո- գին, այլ յերիս հարս եւ յերիս որդիս եւ յերիս հոգիս, անկցի ի քահանայութե- նէն»²: Նմանապէս յաջորդ կանոնը աւե-

լի եւս կը յտակէ խնդիրը ըսելով. «Ե- պիսկոպոս կամ երէց որ ոչ երիս մկրտ- տութիւնս միոյ սրբութեանն կատարեա- ցէ, այլ ի մի մկրտութիւն՝ որ ի մահն Տեսուն տուաւ, անկցի ի քահանայութե- նէն: ... Արդ դուք ո՛վ տեսչալիք, ի մի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգի երեցս մկրտեցէք ըստ Տեսուն կամաց եւ ըստ մերոյ հոգւոյն հրամանի»³: Արդ, առաքե- լական կանոնները կը շեշտեն յանուն ա- մենասուրբ Երրորդութեան մկրտութեան անհրաժեշտութիւնը, այսինքն՝ թէ պէտք է յիշել մկրտութեան պահուն երեք ան- ձերու անունները, առանձին առանձին:

Հայոց Բով

Մերս Ս. Գրիգոր կը մկրտէր ամբողջ ժողովուրդը «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»⁴: Յովհաննէս Ոսկերե- րանի ընծայուած ներքողեան մը կը վկա- յէ թէ Ս. Գրիգոր «Մկրտէր զնոսա յա- նուն ամենասուրբ Երրորդութեանն»⁵: Իսկ Վարդան Մամիկոնեանի դուստրը՝ Ծուշան, իր աղօթքին մէջ, անցողակի կերպով կը յիշէ թէ մկրտութիւնը պէտք է ըլլայ «Ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին սուրբ»⁶: «Յաճախապատում» ճառերուն մէջ ալ կը հանդիպինք «Երաց (Քրիստոս) զնոր շնորհաց զկենացն զգրուես ի ձեռն

1. Մատթ. ԻԸ. 18:

2. Կանոնագիրք Հայաստանեայց եկեղեցւոյ, Ա. Կանոնք Առաքելականք. (հրատ. ԿԵՏԻԿԵԱՆ Հ. Հ.), Վենետիկ, 1941, էջ 69, կանոն 2:

3. Կանոնագիրք Հայաստանեայց եկեղեցւոյ, անդ, էջ 69-71, կանոն ԶԲ:

4. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմութիւն, Վենետիկ, 1930, էջ 614:

5. Սովիբք Հայկականի, Դ, Վենետիկ, 1853, էջ 68:

6. ԱԼԻՇԱՆ Հ. ՂԵՒՈՆԻ, Հայապատում, Վենե- տիկ, 1901, էջ 184: